ԷԴՄՈՆԴ ՇՅՈՒՏՑ

Իր մահկանացուն կնքեց նշանավոր պատմաբան, արևելագետ-հայագետ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, պրոֆեսոր Էդմոնդ Շյուտցը:

Նա ծնվել է 1916 թ., Բուդապեշտում, մտավորականի ընտանիքում: Տեղի գիմնազիան ավարտելուց հետո կրթությունը շարունակել է համալսարանում, որտեղ ստացել է պատմաբան-բանասերի որակավորում: Պատերազմի տարիներին (1942-1945 թթ.) զինվորական ծառայությունն ավարտելուց և ապա խմբագրական-հրատարակչական պաշտոններ վարելուց հետո 1951-1969 թթ. աշխատել է Հունգարիայի ԳԱ պատմության ինստիտուտում, իսկ 1957 թվականից մինչև կյանքի վերջը Բուդապեշտի համալսարանում: Պատմաբանասիրական հիմնավոր կրթությունը, բազմաթիվ լեզուների իմացությունը հնարավորություն են տվել դիտնականին անդրադառնալու արևելագիտական-հայագիտական բազմաթիվ հիմնախնդիրների և քննարկել դրանք հիմնավոր և համակողմանի պատմության և բանասիրության ընձեռած տվյալների համադրությամբ:

Է. Շյուտցը գիտական գործունեությունը սկսել է համալսարանում ստացած մասնագիտությամբ՝ ալթայական լեզուների և Միջին Ասիայի պատմության հարցերի հետազոտությամբ: Այդ հարցերը քննարկել է քոչվոր և տեղաբնիկ ժողովուրդների հարաբերությունների լայն հետնախորքի վրա: Նա անդրադարձել է Առաջավոր Ասիայից դեպի արևմուտք՝ Հայկական լեռնաշխարհ, Կովկաս և հարավռուսական տափաստանները քոչվոր ցեղերի ներխուժումներին: Քանի որ հունգարներն իրենց երկրում հաստատվելուց (896 թ.) առաջ հարավային Ռուսաստանում խազարների հպատակներն էին, ուստի այս հարցն առանցքային նշանակություն է ստանում Հունգարիայի նախնական պատմության համար: Հեղինակը քննարկել է հոների, ալանների, ավարների, խազարների վաղ շրջանի պատմության խնդիրները: Նա հաճախակի դիմում է V-IX դարերի հայ պատմագիրներին, որոնք ուշադրավ հիշատակություններ ունեն Անդրկովկաս և Հայաստան բազմիցս ներխուժած այդ ժողովուրդների մասին: Նրա հետազոտությունների արդյունք եղան «Տափաստանների ժողովուրդների պատմությունը մինչև խազարները», «Խազարների պատմությունը» աշխատությունները:

Է. Շյուտցը անդրադարձել է նաև պատմական հաջորդ փուլում՝ X-XIII դդ. քոչվոր և տեղաբնիկ ժողովուրդների հարաբերություններին:

Հունգար հայագետը երկար տարիներ մանրակրկիտ ուսումնասիրել է այդ ժամանակաշրջանի հունգարական տարեգրություններն ու այլ աղբյուրներ և փաստաթղթերում գտել «Հայերի բնակավայրեր», «Հայերի անվան» և այլ հիշատակություններ: Փաստական տվյալների հիման վրա նա

ցույց է տվել, որ միջնադարյան Հունգարիայի մայրաքաղաք Էստերգոմում գոյություն է ունեցել հայկական համայնք: Պատահական չէր, որ Բելա IV թագավորը 1243 թ. հատուկ հրովարտակով հաստատում է հայերին իր նախորդների կողմից տրված առանձնաշնորհումները: Նա սույն պրոբլեմը քննարկել է «Մոնղոլ-թաթարական արշավանքների հարցի շուրջը», «Դեպի Հունգարիա կատարված մոնղոլական 1241 թ. արշավանքի հարցը», «Թաթարական հարձակումները Անդրկովկաս», «Հայերենից հունգարերեն փոխառնված բառերը» և այլ հոդվածներում:

Է. Շյուտցը անդրադարձել է նաև ուշ միջնադարի Արևմտյան Եվրոպայի հայկական գաղութների պատմաէթնիկական ու լեզվամշակութային հարցերին: Հայագիտության համար էական նշանակություն ունեն հայկական տառերով գրված օտարալեզու բնագրերը: Պրոֆեսորը հատուկ հետաքրքրել, խորացել է ղփչաղերենի մեջ և մի շարք հոդվածներից զատ հրատարակել է «Հայ-ղփչաղ մի տարեգրություն՝ 1620-1621 թթ. լեհ-թուրքական պատերազմի մասին» արժեքավոր աշխատությունը, որը կարևոր սկզբնաղբյուր է Արևմտյան Ուկրաինայի, Լեհաստանի և Մոլդովայի XVI-XVII դարերի պատմության ուսումնասիրության համար: Հեղինակը «Տարեգրության» առավել հավաստիությունը ամրագրում է լեհական և թուրքական աղբյուրների հետ այն բաղդատելով: Գիտնականը շնորհակալ գործ է կատարել նաև ղփչաղերենի քերականության ուսումնասիրության ասպարեզում: Նա արժեքավոր ուսումնասիրություններ ունի նաև XVII դարի Ամստերդամի և Լվովի հայկական տպարանների ու դրանց հրատարակությունների մասին:

Հունգարիայի և Հայաստանի գիտությունների ակադեմիաների միջև երեսուն տարի է աշխույժ գիտական համագործակցություն գոյություն ունի, որի նախաձեռնողն ու ոգեշնչողը եղել է պրոֆ. Է. Շյուտցը: Երկու ակադեմիաների մասնագետների ուժերով 1983 թ. հրատարակվել է «Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից» ստվարածավալ ժողովածուն: Հունգար պատմաբանների հոդվածների շնորհիվ հարստացան մեր գիտելիքները հունգարահայերի մասին: Ժողովածուի պատրաստումն ու հրատարակությունը իրականացվել են Է. Շյուտցի անմիջական մասնակցության շնորհիվ:

Է. Շյուտցը դրսաշխարհի ամենից գործունյա և ճանաչման արժանացած հայագետներից էր: Նա հայ մշակույթի անխոնջ քարոզիչն էր արտասահմանում: Դժվար է մատնանշել հայագիտությանը նվիրված միջազգային որևէ գիտաժողով, որին նա զեկուցումով մասնակցած չլիներ:

Պատկառելի է հունգար հայագետի մանկավարժական վաստակը: Ավելի քան չորս տասնամյակ նա Բուդապեշտի համալսարանում արևելագիտություն ու հայագիտություն էր դասավանդում, հայոց լեզվի դասընթացներ վարում և հայագետներ պատրաստում: Նրա աշակերտները հաջողությամբ աշխատում են հայագիտության տարբեր մասնաճյուղերում:

Է. Շյուտցը 1970-ական թվականներին հրավիրվել էր ԱՄՆ՝ Բլումինգտոնի համալսարանում հունգար բանասիրության կուրս կարդալու: Նա նախաձեռնեց և հաջողեցրեց մտցնել նաև հայոց պատմության դասընթաց: Ինքը կազմեց ԲՈՒՀ-ական ձեռնարկ, որով մի քանի տարի հայոց պատմություն դասավանդեց: Մեր ազգային պատմության հանդեպ նման նվիրումը օրինակ կարող է հանդիսանալ հայազգի հայագետների համար:

Էդմոնդ Շյուտցը իր գիտական ժառանգությամբ, կեսդարյա ջանասեր գործունեությամբ մնայուն հետք է թողել հայագիտության ասպարեզում: Մնում է, որ նրա աշակերտները շարունակեն իրենց վաստակաշատ ուսուցչի գործը, գնան նրա բացած ուղիով և հետևեն նրա օրինակին:

ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ